

Հուշարձան-խաչքարի բացում՝ Արագած համայնքում

Մայիսի 13-ին Արագածոտնի Արագած համայնքում կայացավ հուշարձան-խաչքարի բացման արարողությանը: Հանդիսավոր բացմանը ներկա էին Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը, ԽՍՀՄ հերոս, գեներալ-լեյտենանտ Հուրի Բաբանսկին, ՀԱՊԿ երեսնյան ինստիտուտի տնօրեն Նվեր Թորոսյանը, ՀՀ-ում ՌԴ անվտանգության վարչության պետի տեղակալ Վադիմ Սնիգերյովը, ՀՀ-ում ՌԴ սահմանապահ զորքերի անվտանգության ծառայության վարչության վետերանների խորհրդի նախագահ Գրիգորի Յավրումովը:

Հուշարձանը տեղադրվել է ԽՍՀՄ հերոս, գեներալ-լեյտենանտ Հուրի Բաբանսկու կողմից՝ ի հիշատակ Հայրենական մեծ պատերազմի տարիներին Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի վետերան Սուրեն Թորոսյանի: Տեղադրման վայր է ընտրվել Սուրբ Աստվածածին եկեղեցուն հարակից Թուխ Մանուկ մատուռի բակում ստեղծված խաչքարերի պուրակը:

Նորաբաց խաչքար-հուշարձանի մոտ տեղադրվեցին ծաղիկներ: Ելույթ ունեցողները ներկաներին շնորհավորեցին Հաղթանակի 70-ամյակի եւ ձեռնարկի իրականացման կապակցությամբ: Նշվեց, որ այն իրականացվել է Հայրենական պատերազմի հաղթանակի 70-ամյակի միջոցառումների շրջանակում եւ խորհրդանշում է հայ եւ ռուս ժողովուրդների անխախտ բարեկամությունը:

Այնուհետեւ հանդիսությունը շարունակվեց համայնքի գեղաշուք մշակույթի տանը: Զինվորական բարձրաստիճան պաշտոնյաների կողմից հնչեցին ողջույնի խոսքեր: Կատարվեց պարգեատրման արարողություն:

Ներկաներին շնորհավորեց Սարգիս Սահակյանը: Նա շնորհակալության հայտնեց ձեռնարկի հեղինակներին եւ նշեց, որ այն կատար քայլ է երկու ժողովուրդների բարեկամության գործում: Մարզպետը տեղեկացրեց, որ Արագածոտնի մարզը համագործակցում է ՌԴ Սանկտ Պետերբուրգի մարզի հետ եւ այդ համագործակցության

շրջանակում մարզի Արագածոտնի կողմից Սանկտ Պետերբուրգում տարբեր առիթներով
խաչքարեր են տեղադրվել:

Հանդիսության ողջ ընթացքն ուղեկցվեց փողային նվագախմբի՝ հաղթանակին եւ
հայրենասիրությանը նվիրված երգերով ու երաժշտությամբ: Գեղարվեստական
կատարումներով հանդես եկան տեղի եւ հրավիրված երաժշտական համույթներ: